ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 198-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24-Ը ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 18 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Արենի համայնքի ավագանու 24-ը դեկտեմբերի 2024 թվականի թիվ 18 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 24-ը դեկտեմբերի 2024 թվականի թիվ 18 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 0,05 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

3. Արենի համայնքի Արենի բնակավայրի 4-րդ, 5-րդ և 7-րդ փողոցները, այդ փողոցներին հարող փակուղիներն ու նրբանցքներն ընդգրկող թաղամասը իշխան Տարսայիճ Օրբելյանի անունով անվանակոչելու մասին:

4. Արենի համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց սկսելու մասին:

5. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող Արենի համայնքի սեփականություն հանդիսացող 164,64 քմ մակերեսով բնակելի տունը և սպասարկման համար անհրաժեշտ 0,00318 հա բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը Խաչիկ բնակավայրի բնակիչ Արթուր Մանուկյանի ընտանիքին նվիրաբերելու մասին:

6. Արենիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներին և համայքնային ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցներին պարգևավճարներ հատկացնելու մասին:

7. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

8. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող ծառայողական ավտոմեքենաներից աճուրդով-վաճառքով օտարելու մասին:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ